ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Սյունիքի մարզ, գ.Աշոտավան,1փ 20 շենք, հեռ. 094 81 52 08,էլ-հասցե՝ ashotavan.syuniq@mta.gov.am

"12" հունվարի 2016թ. № 01

Ձեր _____№_____

Հայաստանի Հանրապետության Սյունիքի
մարզպետ Ս.Խաչատրյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Աշոտավան գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 24-ի նիստի N24-Ա, N25-Ն, N26-Ն, N27-Ն, N28-Ն, N29-Ն, N30-Ն, N31-Ա որոշումները:

Աղդիր՝ 21 թերթ:

Հարգանքով Ա.Բեգլարյան

02 02 394 16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Սյունիքի մարզ,գ.Աշոտավան ashotavan.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

“ 24” դեկտեմբերի 2015թ. N 24-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի չորրորդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Աշոտավան գյուղական համայնքի ղեկավարի առաջարկության,որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ 3-կողմ,0-դեմ,0-ձեռնպահ,Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Աշոտավան գյուղական համայնքի ավագանին

Որոշում է

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Աշոտավան գյուղական համայնքի ավագանու 2015թ. դեկտեմբերի 24-ի նիստի հետևյալ օրակարգը.

1. ՀՀ Սյունիքի մարզի Աշոտավան գյուղական համայնքի 2015թ. բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
2. ՀՀ Սյունիքի մարզի Աշոտավան գյուղական համայնքի 2016թ. բյուջեի հաստատման մասին:
3. ՀՀ Սյունիքի մարզի Աշոտավան գյուղական համայնքի 2016թ. տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին:
4. ՀՀ Սյունիքի մարզի Աշոտավան գյուղական համայնքի ղեկավարի 2016թ. աշխատավարձի դրույքաչափի սահմանման մասին:
5. ՀՀ Սյունիքի մարզի Աշոտավան գյուղական համայնքի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
6. ՀՀ Սյունիքի մարզի Աշոտավան գյուղական համայնքի համայնքային սեփականության գույքի 2016թ. գույքագրման փաստաթղթերի հաստատման մասին:

7. ՀՀ Սյունիքի մարզի Աշոտավան գյուղական համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը վարձակալությամբ տրամադրելու համար մեկնարկային գին սահմանելու մասին:

Աշոտավան գյուղական համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ՝ _____ Ա.Ղուկասյան

Կողմ՝ _____ Զ.Բեգլարյան

Կողմ՝ _____ Հ.Ավանեսյան

Աշոտավան համայնքի ղեկավար Ա.Բեգլարյան

24 դեկտեմբերի 2015թ.
գ.Աշոտավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Սյունիքի մարզ,գ.Աշոտավան ashotavan.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

" 24 " դեկտեմբերի 2015թ. N 25-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ կետով,համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Աշոտավան գյուղական համայնքի ղեկավարի առաջարկության,որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ 3-կողմ,0-դեմ,0-ձեռնպահ,Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Աշոտավան գյուղական համայնքի ավագանին

Որոշում է

Կատարել Աշոտավան գյուղական համայնքի 2015թ. բյուջեում փոփոխություն

1.Եկամտային մասի "Այլ ոչ հարկային եկամուտներից" 800,0 հազ. դրամ նվազեցնել՝ նվազեցնելով Վարչական բյուջեի կառավարման ապարատ ծրագրի(01.1.1.51) հետևյալ հոդվածներից

4111 – Աշխատավարձ հոդվածից – 428 հազ. դրամ
4211 – Բանկային գործառնական ծառայություններ հոդվածից – 10,0 հազ. դրամ
4214 – Կապի ծառայություններ հոդվածից – 130,0 հազ. դրամ
4221 – Ներքին գործուղումներ հոդվածից – 10,0 հազ. դրամ
4234 – Տեղեկատվական ծառայություններ հոդվածից – 19,0 հազ. դրամ
4252 – Մեքենաների ընթացիկ նորոգումներ հոդվածից – 44,0 հազ. դրամ
4261 – Գրասենյակային նյութեր հոդվածից – 110,0 հազ. դրամ
4267 – Կենցաղային նյութեր հոդվածից – 11,0 հազ. դրամ
4819 – Նվիրատվություն շահույթ չհ. կազմ. հոդվածից – 38,0 հազ. դրամ

Ընդամենը 800,0 հազ.դրամ

2. Եկամտային մասի " Այլ մուտքերից" 280,0 հազ.դրամ նվազեցնել՝նվազեցնելով ծախսային մասի Նախադպրոցական կրթություն ծրագրի (09.1.1.51)

4511 – Սուբսիդիա հողվածից – 280,0 հազ. դրամ:

Համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ՝ _____ Ա.Ղուկասյան

Կողմ՝ _____ Զ. Բեգլարյան

Կողմ՝ _____ Հ. Ավանեսյան

Աշոտավան համայնքի ղեկավար Ա.Բեգլարյան

24 դեկտեմբերի 2015թ.
գ.Աշոտավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Սյունիքի մարզ,գ.Աշոտավան ashotavan.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

N 26 Ն

"24" դեկտեմբերի 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ. ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և 54,55 հոդվածներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ 3-կողմ,0-դեմ,0-ձեռնպահ,համայնքի ավագանին

Որոշում է

Հաստատել համայնքի ղեկավարի կողմից ներկայացված 2016թ. բյուջեն.

Եկամուտների մասով – 15556,6 հազ. դրամ

Ծախսերի մասով – 15742,4 հազ. դրամ

Համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ՝ _____ Ա.Ղուկասյան

Կողմ՝ _____ Զ. Բեգլարյան

Կողմ՝ _____ Հ. Ավանեսյան

Աշոտավան համայնքի ղեկավար _____ Ա.Բեգլարյան

24 դեկտեմբերի 2015թ.
գ.Աշոտավան

ՀԱՄԱՅՆՔԻ 2016թ. ԲՅՈՒՋԵ
ՄՈՒՏՔԵՐ – ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

հազ. դրամ

		Վարչական բյուջե	Ֆոնդային բյուջե
[illegible]երի ազատ մնացորդ		156,7	29,1
[illegible]		1734,8	
[illegible]ի ազատ			
[illegible]		865,7	
[illegible]ի ազատ			
[illegible]ության վճար		300,0	
[illegible]ի ազատ		—	
Օգտագործման			
Տեղական տուրք		20,0	
Այլ ոչ հարկային եկամուտներ		800,0	
Այլ մուտքեր		700,0	
Ընդամենը սեփական եկամուտներ			
Տարանցիկված լիազորություն			
Ընդհանրական հատկացումներ			
[illegible] ծառայությունից մուտքեր			
Դրամաշնորհներ			
Դոտացիա		11136,1	
Նպատակային հատկացում սուբվենցիա			
Ընդամենը մուտքեր		15556,6	
ԾԱԽՍԵՐ	հազ. դրամ		

	Ծախսային հոդվածների անվանումը	Կառավարման ապարատ	Սոց ծառայություն	Մանկական պարտեզ	Պահուստային ֆոնդ	Դշվիկյար	Ընդամենը վարչական բյուջե	Ընդամենը ֆոնդային բյուջե
[illegible]	Աշխատողների աշխատավարձ և հավելավճարներ	8738,4					8738,4	
[illegible]	Գրասենյակային, դրամական ծառայություններ և հատուկ վճարներ Գրասենյ. ծառ.	120,0					120,0	
[illegible]	Սոցիալական ապահովության վճարներ							
[illegible]	Գրասենյակային ծառայություն Սարք. ծառ.	100,0					100,0	
[illegible]	[illegible] ծառայություններ	450,0					450,0	
[illegible]	[illegible]	100,0					100,0	
[illegible]	[illegible] ծառայություններ	250,0					250,0	
[illegible]	Վերջին գրանցումներ	370,4					370,4	
[illegible]	Հարկային ծառայություններ Եվ/ծառայ.	250,0					250,0	
[illegible]	Տեղեկատվական ծառայություններ	100,0					100,0	
[illegible]	Տրանսպորտային նյութեր	200,0					200,0	
[illegible]	Գրասենյակային նյութեր և հագուստ	200,0					200,0	
[illegible]	Ինքնագնացի և հանքային սենդի նյութեր	200,0					200,0	
[illegible]	Հատուկ նպատակային այլ նյութեր					200,0	200,0	
[illegible]	[illegible] Ֆինансական պետական [illegible] հատկացումներին			3500,0			3500,0	
[illegible]	Այլ հարկեր [illegible]							
[illegible]	Գանձապահի վճարներ						777,8	
[illegible]	Այլ գծով հաշվեցի բյուջեի վարչական [illegible] Ֆոնդից Ֆոնդային մաս							
[illegible]	[illegible] և շինությունների կապիտալ [illegible]							
[illegible]	Տարբերակ տարբերություններ							185,8
[illegible]	Այլ մեքենաներ և տարբերություններ							
[illegible]	ԸՆԴԱՄԵՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՄՈՒՏՔԵՐ							
[illegible]	ՖՈՆԴԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ							
[illegible]	Ընդամենը ծախսեր	[illegible]		3500,0		200,0	15556,6	185,8
	Տարեվերջի մնացորդ							

Համայնքի ղեկավար՝ _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Սյունիքի մարզ,գ.Աշոտավան ashotavan.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

"24" դեկտեմբերի 2015թ. N 27-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով և <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 3-կողմ,0-դեմ,0-ձեռնպահ,համայնքի ավագանին

Որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Աշոտավան գյուղական համայնքի 2016թ. օրենքով սահմանված տեղական տուրքերի ու վճարների դրույքաչափերը.

1.ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծի համապատասխան նոր շենքերի,շինությունների(ներառյալ ոչ հիմնական) շինարարության/տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է.

ա/ Մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում՝ այգեգործական(ամառանոցային) տների,ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝մինչև 4.500 դրամ.

բ/Սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված օբյեկտի համար՝

բա / 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 9000 դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտի համար՝ մինչև 15.000 դրամ.

բգ)1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 15.000 դրամ,

բդ)3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտի համար՝ մինչև 30.000 դրամ.

2. ոչ հինական շինությունների տեղադրման համար.

2/ա. Մինչև 20 քառակուսի մետր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 900 դրամ.

2/բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1.500 դրամ.

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման,ուժեղացման,վերականգնման արդիականացման աշխատանքների(բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար,եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով.

3/1. Չի նախատեսում կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցներ(այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության համար՝ 900 դրամ.

3/2. Բացի օբյեկտի վերակառուցման ,ուժեղացման ,վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից,նախատեսվում է նաև կցակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների(այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գորառնական նշանակության փոփոխության,ապա,բացի սույն կետի <<ա>> ենթակետով սահմանված դրույքաչափի,կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3/3. Նախատեսվում է միայն կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների(այդ թվում ստորգետնյա)շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն,ապա սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինարարություն,որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը.

4.Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 1.500 դրամ.

5.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

5/1. Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում ալկոհոլային խմիչքների վաճառքի կազմակերպման համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 դրամ.

5/2.Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման համար յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 դրամ.

6. Համայնքի տարածքում

6/1. Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ.

6/2. Հեղուկ վառելիքի,տեխնիկական հեղուկների,հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 150.000 դրամ.

7.Համայքնի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 500 դրամ.

8.Համայնքի տարածքում շինարարության կամ շինութան արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կառուցված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու,ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 3000 դրամ.

9.Համայնքի տնօրինության տակ գտնվող հողերը հատկացնելու,հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար,ՏԻՄ մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝3000 դրամ.

10. <<ՏԻՄ>> -ի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման վճար՝1000 դրամ.

Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը տարվա ընթացքում փոփոխության ենթակա չեն.

11.Աշոտավան գյուղական համայնքի ղեկավարին ապահովելու սույն որոշման իրազեկումը: Համայնքի բնակիչներին իրազեկման այլ միջոցների թվում օգտագործել համայնքի վարչական շենքի մուտքից ներս գտնվող առավել տեսանելի մասում գտնվող ցուցատախտակը,նրանց վրա փակցնելով օրենքով սահմանված տեղեկանքները:

Համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ՝ _____ Ա.Ղուկասյան

Կողմ՝ _____ Զ. Բեգլարյան

Կողմ՝ _____ Հ. Ավանեսյան

Աշոտավանի գյուղական համայնքի ղեկավար _____ Ա.Բեգլարյան

24 դեկտեմբերի 2015թ.

գ.Աշոտավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Սյունիքի մարզ,գ.Աշոտավան ashotavan.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

"24" դեկտեմբերի 2015թ. N 28 Ն

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016Թ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետով,որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ 3-կողմ,0-դեմ,0-ձեռնպահ,համայնքի ավագանին

Որոշում է

Աշոտավան գյուղական համայնքի ղեկավարի աշխատավարձը սահմանել 190.000 դրամ:

Համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ՝ _____ Ա.Ղուկասյան

Կողմ՝ _____ Զ. Բեգլարյան

Կողմ՝ _____ Հ. Ավանեսյան

Աշոտավան համայնքի ղեկավար Ա.Բեգլարյան

24 դեկտեմբերի 2015թ.
գ.Աշոտավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Սյունիքի մարզ,գ.Աշոտավան ashotavan.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

"24" դեկտեմբերի 2015թ. N 29 Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ 3-կողմ,0-դեմ,0-ձեռնպահ,համայնքի ավագանին

Որոշում է

Հաստատել համայնքի ղեկավարի կողմից ներկայացված 2016թ.-ի համայնքի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատողների կառուցվածքը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը(հավելվածը կցվում է).

Համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ՝ _____ Ա.Ղուկասյան

Կողմ՝ _____ Զ. Բեգլարյան

Կողմ՝ _____ Հ. Ավանեսյան

Աշտարակ համայնքի ղեկավար Ա.Բեգլարյան

24 դեկտեմբերի 2015թ.

գ.Աշտարակ

Հավելված 1

ՀՀ Սյունիքի մարզի Աշոտավան գյուղական
համայնքի ավագանու 2015թ. դեկտեմբերի 24-ի
նիստի N 29 Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՏԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ.

1.Աշխատակիցների թվաքանակը՝11

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

հ/հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԻ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ ԴՐԱՄ)
1	Համայնքի ղեկավար	1	190000
2	համայնքի ղեկավարի տեղակալ	1	85000
3	աշխատակազմի քարտուղար	1	86000
4	առաջատար-մասնագետ հաշվապահ	1	85000
5	առաջատար - մասնագետ/ 3.2-1/	1	80000
6	Սոցիալական աշխատող	0.83	60400
7	գեղմասվար	0.83	60400
8	գրադարանավար	0.63	46000
9	ծրագրավորող	0.45	33000
10	օժանդակ բանվոր	0.41	30000
11	պահակ	0.77	56000

Աշոտավանի գյուղական համայնքի ղեկավար՝ Ա.Բեգլարյան

Հավելված 2

ՀՀ Սյունիքի մարզի Աշոտավան գյուղական
համայնքի ավագանու 2015թ. դեկտեմբերի 24-ի
նիստի N 29Ն որոշման

„ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՏԱՎԱՆԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ,, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ.

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 6

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

հ/հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԻ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ ԴՐԱՄ)
1	վարիչ	0.94	68400
2	դաստիարակ	0,85	61800
3	դայակ	0,66	48000
4	բուժքույր	0,34	25500
5	խոհարար	0,66	48000
6	պահակ	0,36	26200

Աշոտավան համայնքի ղեկավար Ա. Բեգլարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Սյունիքի մարզ,գ.Աշոտավան ashotavan.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

"24" դեկտեմբերի 2015թ. N 30 Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ 2016Թ. ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,քվեարկության արդյունքներով՝ 3-կողմ,0-դեմ,0-ձեռնպահ, համայնքի ավագանին

Որոշում է

Հաստատել Աշոտավան գյուղական համայնքի սեփականության 2016թ. գույքագրման փաստաթղթերը(ցանկը կցվում է).

Համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ՝ _____ Ա.Ղուկասյան

Կողմ՝ _____ Զ. Բեգլարյան

Կողմ՝ _____ Հ. Ավանեսյան

Աշոտավան համայնքի ղեկավար Ա.Բեգլարյան

24 դեկտեմբերի 2015թ.

գ.Աշոտավան

Ցանկ

Աշոտավան գյուղական համայնքի անշարժ գույքի

h/h	անվանումը	տարեթիվը	քանակը	ծանոթություն
1	ակումբի շենք	1981	1	առկա են պատերը,տանիքը,առանձնացված է մասնաշենքը,վերանորոգված է 5 սենյակ
2	պահակի տնակ	1980	1	առկա են պատերը.
3	կաթսայատուն	1979	1	առկա են պատերը,տանիքը,ծխնելույզը,ենթակ է հիմնական վերանորոգման
4	հանրախանութ	1971	1	վերանորոգված է տանիքը,շենքի ներսը,ենթակա է արտաքին վերանորոգման
5	մանկապարտեզի շենք	1971	1	ամբողջովին վերանորոգվում է
6	կշեռք 15տ	1980	1	անսարք
7	սիլոսի խրամատ	1982	1	վթարային,վերանորոգման ենթակա
8	գլանատակառ 5տ	1976	3	էռոզացված են
9	գլանատակառ10տ	1979	1	էռոզացված է
10	բնակելի շենքեր	1968	18	
11	ոռոգման ջրի ցանց			
12	տրիմո	1979	1	
13	երկաթյա կասսա	1979	3	
14	բջջային հեռախոս		1	անսարք

Աշոտավանի գյուղական համայնքի ղեկավար՝ Ա.Բեգլարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Սյունիքի մարզ,գ.Աշոտավան ashotavan.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

"24" դեկտեմբերի 2015թ. N 31 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի և Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 76-րդ հոդվածի 3-րդ կետով,հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ 3- կողմ,0-դեմ,0-ձեռնպահ,համայնքի ավագանին

Որոշում է

Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահողերը տալ վարձակալության և 1 հա-ի համար մեկնարկային գին սահմանել՝

Անջրդի II կարգ – 6000/վեց հազար/ դրամ

Անջրդի III կարգ – 4000/չորս հազար/ դրամ

Անջրդի IV կարգ - 3000/երեք հազար/ դրամ

Անջրդի V կարգ - 2000/երկու հազար/ դրամ

Զրովի II կարգ – 10000/տասը հազար/ դրամ

Զրովի III կարգ - 8000/ութ հազար/ դրամ

Զրովի IV կարգ – 5000/հինգ հազար/ դրամ

Զրովի V կարգ – 3000 /երեք հազար/ դրամ:

Համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ՝ _____ Ա.Ղուկասյան

Կողմ՝ _____ Զ. Բեգլարյան

Կողմ՝ _____ Հ. Ավանեսյան

Աշոտավան համայնքի ղեկավար _____ Ա.Բեգլարյան

24 դեկտեմբերի 2015թ.

գ.Աշոտավան